խաֆղանճի. եւ էր քաղաքս ի վերայ բարձրա-
ւանդակ տեղոջ: Եւ մերձ սորա միլ մի՝
ասին թէ կայ գեղ մի Հայոց, երկու էրէց,
բայց չգնացի անդ:

Եւ անտի սակաւ մի գնացեալ տեսաք 75
լեառն մի, ուստի ջուր բխէր եւ եկեալ ի վայր
քար դառնայր, բայց կակուղ էր. ընդ որ հիա-
ցեալ փառս տվաք Աստուծոյ: Եւ այն օրն հա-
սաք ի ԿԵՐԱՏԱՑ. եւ սա յոյժ մեծ լեառն էր,
բարձր եւ ցրտային. եւ ասին թէ ասա սաս- 80
տիկ ձմեռ լինի որպէս յԱրզրումն: Եւ անտի
հինգ օրն հասաք ի ԹՕՍԻԱՑ խառապան,
ուստի մօխայեր կ'ելնի. եւ բոլորն ամէն մու-
խայերձիք են. բայց չէ նման Անկուրու, այլ
ցած. եւ բազում դաւառաց, նաեւ Լէհու՝ 85
դային վաճառականք. եւ էր յոյժ մրգաւէտ:

Անտի երկու օրն հասաք ՅՕՍՄԱՆՁՈՒԽ.
եւ սա ունէր յոյժ բարձր եւ սիվրի բերթ յինք-
նարոյս քարանց, որպէս Բաբիլան: Եւ անտի
մէկ օրն հասաք ի գեղեցիկ քաղաքն Հայոց 90
ՄԱՐԶՈՒԱՆ, մրգաշատ եւ դրախտաւոր. եւ
կայր եկեղեցի մի՝ Աստուածածին անուն,
բերթին անուն, բերթին մէջն՝ ի վերայ բարձր
լերան, յորմէ ամենայն քաղաքն եւ դաշտն
երեւէր. կային լաւ եւ իմաստուն քահանայք. 95
եւ աւելի քան զեկեղիւր տուն հայի, տեղացի
եւ եկամուտ: Եւ սորա առջեւն մեծ դիւղ մի՝
ԿՈՒՄԻՇ. եւ յիրաւի Կումիշ, դի ադնիւ, բա-
րակ եւ փայլուն չուլ անտի կ'ելնէ, որ այլ աշ-

71 բարձրաւանդակ: — 98 փարակ: